Հավելված N 1
ՀՀ կառավարության 2010 թվականի
մայիսի 27 -ի N 660 - Ա որոշման

Ց Ա Ն Կ

«ՍԱՐԱՆԻՍՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

NN ը/կ	ԱՏԳ ԱԱ-ի ծածկա-գիրը	Անվանումը	Մոդելը	Չափի միավորը	Քանակը	Արտահան ման երկիրը	Արժեքը (դրամ)	Ներմուծման ժամկետը	
								տարի	Եռամս-յակ
1.	847529000	Հալված ապակու ուղի	BLQL660-5070	հատ	1	Չինաստան	13205500	2010	II եռամս.
2.	847529000	Հալված ապակու սնուցող սարք	BLD660-180	հատ	1	Չինաստան	5005000	2010	II եռամս.
3.	847529000	Մեքենայի կառավարման համակարգ	DSTF	հատ	1	Չինաստան	9625000	2010	II եռամս.
4.	847529000	Ապակե տարա փոխադրիչ սարք	BLHD-542C	հատ	1	Չինաստան	1347500	2010	II եռամս.
5.	847529000	Ապակե տարա հրիչ սարք	BLDT1800A	հատ	1	Չինաստան	2733500	2010	II եռամս.
6.	847529000	Կոնվեյեր / conveyor/	BLLH1800	հատ	1	Չինաստան	1386000	2010	II եռամս.
7.	841780850	Ապակե տարաների թրծման վառարան	BLMQ1800	հատ	1	Չինաստան	18865000	2010	II եռամս.
8.	846490800	Ապակե տարան սառը վիճակում լաքապատող սարք	BLJT1800	հատ	1	Չինաստան	3272500	2010	II եռամս.
9.	846490800	Ապակե տարան տաք վիճակում լաքապատող սարք	BLRTA	հատ	1	Չինաստան	3272500	2010	II եռամս.
10.	842839900	Հոսքագծերի համակարգ կուտակիչ սեղանով	P3-18	հատ	1	Չինաստան	11704000	2010	II եռամս.
11.	842890950	Շիշ դասավորող սարք	TM21	հատ	1	Չինաստան	12705000	2010	II եռամս.
12.	847982000	Խառնիչ	BLLM	հատ	1	Չինաստան	1232000	2010	II եռամս.
13.	847982000	Գրանուլյատոր	BLPL900	հատ	1	Չինաստան	9625000	2010	II եռամս.
14.	842240000	Փաթեթավորող սարք	BQ1	հատ	1	Չինաստան	7315000	2010	II եռամս.
15.	841459800	Հովացնող օդափոխիչ	10-24-001N8F-4	հատ	2	Չինաստան	4158000	2010	II եռամս.
16.	841480800	Կոմպրեսոր՝ իր 3 տարողություններով	GA132-7.5	հատ	1	Չինաստան	14225750	2010	II եռամս.
17.	841939900	Չորացուցիչ	25F	հատ	1	Չինաստան	1925000	2010	II եռամս.
18.	841410200	Վակուումային պոմպ	2BV5 131-OKC	հատ	2	Չինաստան	3850000	2010	II եռամս.
19.	690290000	Հրակայուն աղյուս		տոննա	1028	Չինաստան	206955595	2010	II եռամս.
20.	381600000	Շամոտի փոշի		տոննա	24,78	Չինաստան	6824125	2010	II եռամս.
21.	903210200	Վառառանի կառավարման համակարգ		հատ	1	Չինաստան	30800000	2010	II եռամս.
22.	847149000	Կառավարման համակարգ		հատ	1	Չինաստան	18480000	2010	II եռամս.
23.	842832000	Էլեվատոր / rail elevator /		հատ	1	Չինաստան	1540000	2010	II եռամս.

24.	842832000	Էլեվատոր / bucket elevator/		հատ	2	Չինաստան	10164000	2010	II եռամս.
25.	842839200	Էլ. պաղյոմնիկ / electric hoister/		հատ	2	Չինաստան	3080000	2010	II եռամս.
26.	847982000	Խառնիչ / mixer/		հատ	1	Չինաստան	5082000	2010	II եռամս.
27.	842839900	Կոնվեյեր		հատ	2	Չինաստան	5775000	2010	II եռամս.
28.	842890910	Բեռնաթափիչ		հատ	15	Չինաստան	6930000	2010	II եռամս.
29.	847982000	Նախնական խառնիչ		հատ	1	Չինաստան	693000	2010	II եռամս.
30.	842139900	Փոշեհավաք		հատ	1	Չինաստան	1713250	2010	II եռամս.
31.	847420900	Ջարդիչ / hummer crusher/		հատ	1	Չինաստան	2695000	2010	II եռամս.
32.	842382	Կշռող համակարգ		հատ	2	Չինաստան	17402000	2010	II եռամս.
33.	842720	Ավտոամբարձիչ (կառ)	CPCD30N-RG5	հատ	1	Չինաստան	5505500	2010	II եռամս.
34.	842290900	Փաթեթավորող սարքի մասեր		հատ	6	Չինաստան	3503500	2010	II եռամս.
35.	701710000	Ապակե գործիքներ		կգ	10	Չինաստան	1020250	2010	II եռամս.
36.	382200000	Անալիզի ռեագենտներ		կգ	12	Չինաստան	943250	2010	II եռամս.
37.	9024-9032	Ապակե տարայի և հումքի խտության, ջերմադիմացկունության, ջերմաստիճանի, ճնշման, չափերի, հաստության, ամրության, փափկության ստուգման սարքեր		հատ	11	Չինաստան	16739800	2010	II եռամս.
Ընդամենը							471298520		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվականի
մայիսի 27 -ի N 660 - Ա որոշման

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N

«ՍԱՐԱՆԻՍՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երևան ..... 2010թ.

Հայաստանի Հանրապետությունը, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), ի դեմս ----------, մի կողմից, և «Սարանիստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս ---------- (այսուհետ՝ ընկերություն), մյուս կողմից (նախարարությունը և ընկերությունը միասին հիշատակելու դեպքում, այսուհետ՝ կողմեր) հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 27 -ի N 660 -Ա որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Պայմանագրով ընկերությունը պարտավորվում է կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-ին հոդվածով սահմանված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության կարգը հաստատելու մասին» N 600-Ն որոշմամբ սահմանված կարգով ընտրված ընկերության կողմից իրականացվող ներդրումային ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) նախատեսված

աշխատանքները, իսկ նախարարությունը պարտավորվում է իր իրավասությունների շրջանակներում աջակցել ընկերությանը ծրագրի իրականացման գործընթացում։

2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

2.1. Նախարարությունը պարտավոր է՝

2.1.1. կատարել ծրագրի իրականացման մոնիթորինգ։

2.2. Նախարարությունն իրավունք ունի՝

2.2.1. կատարելու ընկերության կողմից իրականացվող ծրագրի նկատմամբ վերահսկողություն.

2.2.2. պահանջելու ընկերությունից ներկայացնել պայմանագրի 3.6-րդ կետով սահմանված հաշվետվությունները։

2.3. Ընկերությունը պարտավոր է՝

2.3.1. մինչև 2010 թվականի հոկտեմբերի 1-ը ավարտել ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացված ներդրումային ծրագրում նշված՝ ապակե տարաների արտադրության ընդլայնման կազմակերպումը.

2.3.2. պայմանագրի 2.3.1-ին ենթակետով նշված ծրագրի շրջանակներում ստեղծել առնվազն 60 նոր աշխատատեղ՝ ապահովելով նրանց մոտ 114 հազ. դրամ միջին աշխատավարձով.

2.3.3. հարկային պարտավորությունները և սոցիալական ապահովության վճարներն ավելացնել աշխատողների թվի և արտադրանքի իրացման ծավալների ավելացմանը համապատասխան.

2.3.4. կատարել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ տրված ցուցումները.

2.3.5. իրականացնել ծրագրով նախատեսված այլ անհրաժեշտ աշխատանքներ։

2.4. Ընկերությունն իրավունք ունի՝

2.4.1. ինքնուրույն որոշելու ծրագրի իրականացման մեխանիզմները.

2.4.2. ծրագրի իրականացմանը ներգրավելու այլ կազմակերպությունների և անհատ փորձագետների, որոնց կողմից իրականացվող աշխատանքների որակի պատասխանատվությունը կրում է ընկերությունը։

3. Հաշվետվություն և մոնիթորինգ

3.1. Ընկերության կողմից ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացվում է մոնիթորինգ։

3.2. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է իրականացնել ծրագրի շրջանակներում մոնիթորինգ, ինչպես նաև ուսումնասիրել ընկերության կողմից իրականացված մոնիթորինգը և ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր ու նյութեր։

3.3. Մոնիթորինգի ընթացքում բացահայտված թերացումների և բացթողումների շտկման նպատակով նախարարության կողմից ընկերությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ։

3.4. Նախարարության կողմից իրականացվող մոնիթորինգի ընթացքում ընկերությունից կարող են պահանջվել գրավոր և բանավոր պարզաբանումներ և բացատրություններ։

3.5. Մոնիթորինգն իրականացվում է ծրագրով ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը գնահատելու նպատակով։

3.6. Ընկերությունը նախարարություն է ներկայացնում եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվություններ (տեքստային և ֆինանսական)։

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Ընկերությունը պայմանագրով և ծրագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, նախարարության վերահսկողությունից խուսափելու դեպքում, նախարարությունն իրավունք ունի միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու ընկերությունից վճարելու հետաձգված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի N 660 -Ա որոշման N1 հավելվածով սահմանված՝ ընկերության կողմից ներմուծվող ապրանքների ընդհանուր գումարից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար օրենքով սահմանված տույժերը՝ ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգման օրվանից մինչև գործարքն իրականացնելու հաշվետու ժամանակաշրջանի ավարտը՝ «Ավելացված արժեքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով։

4.2. Կողմերը համաձայնվում են պայմանագրի շուրջ ծագող տարաձայնությունները կարգավորել բանակցությունների միջոցով։ Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով։

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև ծրագրի պատշաճ իրականացման ավարտը։

5.2. Ծրագիրը համարվում է կատարված պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման դեպքում։

6. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթա-

հարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

7.2. Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3. Պայմանագիրը կնքված է հայերենով՝ 2 օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ